ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 19 հոկտեմբերի 2017թ.

Սույն թվականի հոկտեմբերի 19-ին ժամը 10.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/09» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ–ի և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Խ. Ժ. Սաֆարյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ն. Ա. Կուտուզյանը, Ա. Հ. Ապրոյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրաված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- 1-ին և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ –ին:
- 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Մաքս Օիլ» ՍՊԸ –ին:
- Առաջարկել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ–ին և «Մաքս Օիլ» ՍՊԸ–ին հաստատել պայմանագրերի նախագծերը և ներկայացնել պայմանագրերի ապահովում:
- Սույն արձանագրությունը և պայմանագրեր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- Անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց և անգործության ժամկետի ավարտին օրվան հաջորդող երկրերդ աշխատանքային օրը, ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

հանձանաժողովի նախագահ՝	Խ. Ժ. Սաֆարյան
հանձանաժողովի անդամ՝	Ն. Ա. Կուտուզյան
հանձանաժողովի անդամ՝	Ա. Հ. Ապրոյան
հանձանաժողովի անդամ՝	Լ. Գ. Սիրունյան
հանձանաժողովի անդամ՝	Ս. Պ. Կարապետյան
հանձանաժողովի քարտուղար՝	Ս. Բ. Ղարաբաղցյան